



# ՄՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԻ ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

Գործողության սկիզբ

15/10/18թ.

Գործողության  
ավարտ

Սահմանված չէ

Հարգելի վարկառու, բոլոր վարկատուները պարտավոր են տրամադրել նմանատիպ թերթիկ, որում ամփոփված են սպառողական վարկի էական պայմանները: Վարկ ստանալու համար դիմելիս վարկատուն Ձեզ կտրամադրի սպառողական վարկի էական պայմանների ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ, որում կներկայացվեն Ձեզ տրամադրվելիք վարկի անհատական պայմանները, որոնք չպետք է լինեն ավելի խիստ, քան սույն ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹԵՐԹԻԿՈՒՄ նշվածները:

## 2. ՎԱՐԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Վարկի անվանում

Սպառողական Վարկ

2.2 Վարկի գումար

Առավելագույնը գուտ ամսական  
աշխատավարձի լոթապատիկը, բաց ոչ  
ավելի քան 2 000 000 ՀՀԴ

2.3 Վարկի ժամկետ

Առավելագույնը 30 ամիս

2.4 Տարեկան  
անվանական % (SUS)

22

Այն փոկոսադրույքն է, որի հիման վրա հաշվարկվում են վարկի փոկոսագումարները:

2.5 Տարեկան  
փաստացի % (ՏՓՏ)

29.8

Այն փոկոսադրույքն է, որում, բացի վարկի փոկոսագումարներից, հաշվի են առնված վարկի տրամադրման և սպասարկման գծով բոլոր պարտավոր վճարները: Վարկային պայմանագրի կնքման դեպքում Ձեր վարկի ՏՓՏ-ն չի կարող լինել ավելին, քան այս թերթիկում ներկայացված ՏՓՏ-ն:

## 3. ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ

 3.1 Գրավ

Չի պահանջվում

 3.2 Երաշխավորություն

- Վարկի տրամադրման պահին՝  
մեկ երաշխավոր՝ մինչև 500 000 ՀՀԴ վարկի դեպքում  
երկու երաշխավոր՝ 500 000 ՀՀԴ գերազանցող  
վարկի դեպքում
- Գործատուի հետ աշխատանքային  
հարաբերությունների դադարման դեպքում նաև՝  
չարժական կամ անշարժ գույք և/կամ  
Կազմակերպության կողմից ընդունելի  
երաշխավորություն

## 4. ՎԱՐԿԻ ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

4.1 Վարկ/Գրավ  
Հարաբերակցություն %

Չի պահանջվում

4.3 Կանխավճար/Վարկ  
Հարաբերակցություն %

Չի պահանջվում

4.2 Մարումների հաճախականություն

 Մայր գումար

Ամսական

 Տոկոսագումար

Ամսական

Այլ հաճախականության դեպքում նշել ձևը

Վարկի հիմնական գումարի մարման  
համար հնարավոր է դադարի շրջան  
հունվար ամսվա համար

## 5. ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐ

5.1 Վարկային հայտի  
ուսումնասիրության

Չի պահանջվում

5.2 Վարկի սպասարկման

Չի պահանջվում

5.3 Գրավի գնահատման

Չի պահանջվում

5.4 Նոտարական  
վավերացման

Չի պահանջվում

5.5 Գրավի  
ապահովագրության

Չի պահանջվում

5.6 Այլ միջնորդավճարներ

4.5 % տրամադրման վճար

5.7 Ընդամենը այլ  
վճարներ

4.5 % տրամադրման վճար

Բոլոր այլ վճարների ընդհանուր  
գումար

## 6. ԶԵՐ ԻՐԱՎՈՒՆՔԸ



Դուք իրավունք ունեք վարկատուի հետ հաղորդակցվել Ձեր նախընտրած եղանակով՝ առձեռն, էլեկտրոնային կամ փոստային կապի միջոցով (օրինակ՝ Դուք կարող եք Ձեր քաղվածքը ստանալ Ձեր էլեկտրոնային փոստի միջոցով):  
Դուք իրավունք ունեք ցանկացած չափով ժամկետից շուտ մարել վարկը՝ առանց տույժեր կամ տուգանքներ վճարելու:

## 7. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԿԱՏԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԶԵՁ ՀԱՄԱՐ ՀՆԱՐԱՎՈՐ ԲԱՑԱՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

### ՏՈՒՅԺ/ՏՈՒԳԱՆՔՆԵՐ

7.1 Վարկի մարդ գումար չվճարելու դեպքում

0,13% օրական, դադարում է ժամկետանց պարտավորության ամբողջական մարման օրը

7.2 Տոկոսագումարները չվճարելու դեպքում

0,13% օրական, դադարում է ժամկետանց պարտավորության ամբողջական մարման օրը

7.3 Այլ վճարներ չկատարելու դեպքում

Չի պահանջվում

7.6 Ձեր գրավի առարկայի վրա օրենքով սահմանված կարգով կարող է **քննագանձում** տարածվել:

7.5 Այն դեպքում, երբ գրավի իրացումից հնարավոր չէ բավարար գումար Ստանալ, ապա Ձեր այլ անձնական գույքը կարող է օգտագործվել Վարկի մարման համար

7.6 Ձեր մասին տեղեկատվությունը օրենքով սահմանված կարգով կարող է գրանցվել **Վարկային բյուրոյում**: Դա կարող է խոչընդոտել Ձեզ՝ ապագայում վարկ ստանալու համար:

## 8. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

Ֆիզիկական անձանց դեպքում

☑ Անձնագիր/տույնականացման քարտ : Ներկայացվում է Վարկատուի, Վարկատուի հետ փոխկապակցված անձանց և Երաշխավորների կողմից:

☑ Տեղեկանք աշխատավարձի մասին /Հավելված 2/ կամ անհրաժեշտ տեղեկատվությունը պարունակող փաստաթղթեր. Վարկատու Երաշխավորներ /ըստ անհրաժեշտության/:

☑ Բնակության վայրի սեփականության վկայականի պատճենը կամ բնակության վայրի մասին տեղեկանք (ըստ անհրաժեշտության) Ներկայացվում է Վարկատուի և/կամ՝ Երաշխավորի կողմից

☑ Համաձայնություն /վարկային պարտավորությունների մասին հարցում կատարելու վերաբերյալ, Հավելված 7/ Ներկայացվում է Վարկատուի, Վարկատուի հետ փոխկապակցված անձանց և Երաշխավորների կողմից

## 9. ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՅՏ

Վարկային հայտի (դիմումի) վերաբերյալ որոշման կայացման առավելագույն ժամկետ

3 օր

Վարկային հայտի (դիմումի) վերաբերյալ որոշման մասին տեղեկացնելու ժամկետ

1 օր

Վարկը տրամադրելու ժամկետ (Պահանջվող բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց հետո)

3 օր

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՐԱՇԽԱՎՈՐԻ ՀԱՄԱՐ

ԵՐԲ ՀԱՆԴԵՍ ԵՔ ԳԱԼԻՍ ՈՐՊԵՏ ԵՐԱՇԽԱՎՈՐ, ԱՊԱ՝

ԴՈՒՔ ԵՎՍ ԿՐՈՒՄ ԵՔ ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ, այսինքն՝ երբ վարկառուն չի կատարում կամ թերի է կատարում իր պարտավորությունը, ապա վարկի չմարված մասի պարտավորությունները տարածվում են Ձեզ վրա:

ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՍՏԱՆԱԼ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՎԱՐԿԱՌՈՒԹՅ ՎԱՐԿԻ ՎՃԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ այսինքն՝ Դուք կարող եք վարկառուից պահանջել հատուցել վարկատուին վճարած գումարի տոկոսներն ու վարկատուի փոխարեն պատասխանատվությունը կրելու կապակցությամբ կրած այլ վնասները:

ՎԱՐԿԱՏՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐ Է ՁԵՁ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼ ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ այսինքն՝ երբ վարկառուն չի կատարում կամ թերի է կատարում իր պարտավորությունը, ապա Դուք պարտավոր եք վարկատուի կողմից այդ մասին նախագույշացվելուց հետո Երաշխավորության պայմանագրով սահմանված ժամկետում մարել վարկի չմարված պարտավորությունը:

ՎԱՐՈՂ ԵՔ ՀԱՅՏՎԵԼ «ՎԱՏ ՎԱՐԿԱՌՈՒՆԵՐԻ ՑՈՒՑԱՎՈՒՄ» այսինքն՝ վարկատուի կողմից վարկի չմարման դեպքում Դուք կարող եք գրանցվել Վարկային բյուրոյում, որտեղ ձևավորվում է Ձեր վարկային պատմությունը: Դա կարող է խոչընդոտել Ձեզ՝ ապագայում վարկ ստանալու ժամանակ:



### ԻՆՉ Է ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ:

Վարկային պատմությունը Ձեր ֆինանսական պարտավորությունների կատարման վերաբերյալ տեղեկությունների ամբողջությունն է, որը հավաքվում, կուտակվում և պարբերաբար նորացվում է ինչպես Ձեզ վարկ տրամադրած առանձին վարկատուների, այնպես էլ Վարկային բյուրոյի կողմից:

Դուք իրավունք ունեք տարեկան մեկ անգամ անվճար ձեռք բերել Ձեր վարկային պատմությունը ԱԲՈԱ վարկային բյուրոյից՝ այցելելով Մ. Խորենացու փող. 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն, 9-րդ հարկ: Վարկային պատմության մասին ավելի մանրամասն կարող եք իմանալ [www.acra.am](http://www.acra.am) կայքից